Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի << Տալվորիկի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ), պատմություն (24 դասաժամ), երաժշտություն (4 դասաժամ), ֆիզկուլտուրա (17 դասաժամ), անգլերենի (6 դասաժամ),ռուսաց լեզու (7 դասաժամ),հայոց լեզու (17 դասաժամ), ՆԶՊ (2 դասաժամ, 0,5 դրույք զինղեկ) առարկաների ուսուցիչների թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Χ4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի սեպտեմբերի 6-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի սեպտեմբերի 24 -ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արմավիրի մարզի << Տալվորիկի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Արմավիրի մարզ, գ.Տալվորիկ :
Տեղեկությունների համար զանգահարել (094) 159 132 հեռախոսահամարով:

<<Տալվորիկի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենություն